«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ժողովրդական ավանդույթները որպես կրտսեր դպրոցականների բարոյական արժեքներ ձևավորող պայման

ԱՌԱՐԿԱ **Մայրենի**

ՀԵՂԻՆԱԿ Արմենուհի Աբրահամյան (դասվար)

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջամշլուի հիմնական դպրոց

Ներածություն. 3
ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆ 4
1.1 Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում 4
1.2. Կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության առանձնահատկությունները.....10
ԳԼՈՒԽ 2.Հետազոտական աշխատանք և հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություն ..13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20

Ներածություն.

Թեմայի արդիկանությունը: Ժամանակակից հասարակությունը փոփոխվում է աննախադեպ տեմպերով, փոխվում են համակեցության արժեքներն ու նորմերը: Քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում, երբ առաջընթացի և սոցիալական փոխակերպումների տեմպերը խիստ բարձր են, անկայունությունն ու նորարարությունը դարձել են հասարակական կյանքի բնութագրական հատկանիշներ: Լինելով մարդկային վարքի սոցիալական կանոնակարգման վաղ ձևերից մեկը՝ ավանդույթները պահպանում, ամրագրում և հասարակական հարաբերություններում վերարտադրում են նախորդ սերունդների կենսափորձը: Յուրաքանչյուր ազգ ինքն է մոդելավորում իրեն՝ ավանդույթներից վերցնելով այն ամենը, ինչը համապատասխանում է իր հոգեկերտվածքին և, միաժամանակ, համահունչ է ժամանակի պահանջներին:

Հետազոտության նպատակն է բացահայտել ժամանակակից դպրոցում ժողովրդական ավանդույթների ազդեցությունը կրտսեր դպրոցականների բարոյական արժեքներ ձևավորող պայմանները :

Հետազոտության խնդիրներն են.

1. վերլուծել ավանդույթների տեղն ու դերը կրտսեր դպրեցականի բարոյական դաստիարակության համակարգում
2. ուսումնասիրել կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության և սոցիալականացման գործընթացի հետազոտությունը, որով ապահովվում է անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն ու սոցիալականացումը:
3. պարզաբանել նորմերի ու արժեքների վերարտադրության առանձնահատկությունները, դրանց շարժառիթներն ու մեխանիզմները,
4. սերունդների կենսափորձի փոխանցման համատեքստում վերլուծել ավանդույթների այն հնարավորությունները, որոնց օգնությամբ իրացվում է ժառանգորդման և ինքնության պահպանմանը միտված սերնդափոխումը և սոցիալական համակարգի անվթար գործառությունը,
5. ավանդույթը դիտարկել որպես սոցիոմշակութային հիշողություն, իսկ հիշողությունը որպես ավանդույթի ճանաչման, պահպանման և փոխանցման գործոն:

Հետազոտության մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառել եմ հետևյալ մեթոդները՝զրույց, թեստավորում:

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆ

1.1 Ազգային ավանդույթների , արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում

Հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանը, խոսելով ազգային ավանդույթների դաստիարակչական նշանակության մասին, գրում է, որ ուսուցումը և դաստիարակությունը պետք է համապատասխանեն ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հետևաբար, ազգային ավանդույթները, արժեքները և ընտանիքն այն էական գործոններից են, որոնցով պիտի պայմանավորվի նոր սերնդի դաստիարակության գործընթացը: Ավանդույթը կարևոր հասկացությունն է. այն առկա է բոլոր ոլորտներում՝ քաղաքական, գեղարվեստական, բարոյական, կրթական և այլն: Ազգային ավանդույթները՝ որպես հայ ժողովրդի հոգևոր արժեքներ, հարուստ են և ինքնատիպ: Դրանք ժողովրդական բանահյուսության տարբեր նմուշներ են՝ ավանդազրույցներ, առասպելներ, վիպական պատմություններ, ինչպես նաև ազգային ծեսեր, խաղեր, տոներ, տարազ և այլն: Որպես կարևորագույն մանկավարժական արժեք՝ ավանդույթները հիմք են հանդիսանում երեխայի համակողմանի զարգացման համար, ձևավորում են հասունացող սերնդի հոգեկերտվածքը՝ միաժամանակ նրան ներգրավելով սոցիալ-մշակութային հարաբերությունների ոլորտը: Արդի մանկավարժական պրակտիկայում ուրույն տեղ ունի ազգային ավանդույթներով իրականացվող դաստիարակությունը: Հայ ժողովուրդը պատմական զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է իրեն բնորոշ սովորույթներ, առօրյա կյանքի, կանոններ, կենցաղավարության նորմեր, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևորագույն միջոց: Երեխայի դաստիարակության գործընթացում կարևոր է հաշվի առնել ազգային ավանդույթները, սովորույթները, բարքերը, ժողովրդական կենցաղը, ինչպես նաև տեղ հատկացնել ազգային առաջադիմական ավանդույթներին: [3.182 էջ] «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային

հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»: Ազգային ավանդույթների պահպանումը և կիրառումը կարող են մեծապես նպաստել աճող սերնդի դաստիարակությանը, ինչը պահանջում է ավանդույթների հանդեպ ստեղծագործական մոտեցում, անցյալի մշակութային արժեքների խոր իմացություն, դրանց արդիականության նուրբ զգացողություն: Հարկ է նկատի ունենալ, որ ոչ բոլոր ավանդույթներն են պահպանել դաստիարակչական նշանակությունը:

Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն: Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է զանգվածային տեղեկատվական միջոցների դերը, որոնցում ներկայացվող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերն իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա: Եթե ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, ազգային արժեհամակարգին խորթ և հաճախ անհարիր արժեքները, սոցիալական բացասական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծանում է, և, ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անարժեք, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա միանգամայն հավանական է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: [3.184 էջ]

Ծնողները, խրախուսելով կամ հանդիմանելով, ամրապնդում կամ կասեցնում են տվյալ վարքի և արժեքային պատկերացումների ձևավորումը: Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ

ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն: Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոց են ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Որպես մանկավարժական արժեքներ՝ դրանք մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: [2. 16-17 էջ]

Օրինակ՝ ժողովրդական բանահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված են ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով»:

Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին միշտ հատուկ է եղել բացառիկ աշխատասիրությունը, որով էլ պետք է դաստիարակվի երեխան: Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ են գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները: Ազգային տոների և խաղերի ընթացքում կրտսեր սերնդի մեջ դաստիարակվում է հարգալից վերաբերմունք աշխատանքային ավանդույթների նկատմամբ: Ազգային տոները կարևոր նշանակություն ունեն նաև բարոյական դաստիարակության համար: Ավանդական տոները (Նոր տարի, Վարդավառ և այլն) իրենց արմատներով կապված են հայ ժողովրդի հավատալիքների ու պաշտամունքների հետ:

Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ-մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում ազգային յուրահատկություններին, ինչն էլ խանգարում է ընտանեկան հարաբերությունների

նորմալ ընթացքին, մասնավորապես՝ երեխայի դաստիարակությանը: Այսօր հասարակություն են ներթափանցել արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին: Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքը՝ որպես մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Ընտանիքը սերտորեն կապված է պետության ու հասարակության զարգացման հետ և շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող դրական և բացասական փոփոխություններին: Սակայն միշտ չէ, որ ընտանիքը գտնվում է համապատասխանության մեջ տվյալ դարաշրջանի սոցիալ-տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից: Դպրոցը սերտ կապ է հաստատում հատկապես այնպիսի կառույցների հետ, որոնք իսկապես անում են ամեն ինչ երեխաների դաստիարակության շատ խնդիրների լուծման առումով: [3.184- 187էջ]

Մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ դպրոցում այն կարող է լուրջ ներդրում կատարել հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն ու ֆիզիկական կատարելությունը իրենց մեջ ներդաշնակ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում, որովհետև երեխաների ճիշտ դաստիարակությունից, դրանում ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի գործոնների մանկավարժորեն անթերի գործադրումից է կախված քաղքացիական հասարակության ապագան: Ավանդույթների էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա գործառույթները և համակարգային վերլուծությունը լրացնել նրա զարգացման ու գործառական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Վերլուծության նման անհրաժեշտությունը պայմանավորված է ավանդույթի համակարգային գործառական էությամբ, որը երևան է հանում ավանդույթի բուն իմաստն ու բովանդակությունը: Հասարակական տարբեր ոլորտներում «ավանդույթն»ր հասկացությունն օգտագործվում է այն դեպքում, երբ անցյալը նշելու նկատառումներից ելնելով խոսվում է հասարակական հարաբերությունների և սոցիալական գործունեության մասին: Այլ կերպ ասած՝ ավանդույթը այսպես թե այնպես կապված է անցյալի հետ, բայց միաժամանակ զուգորդվում է այլ արժեքների

հետ: Մասնավորապես՝ ավանդույթը մեկնաբանվում է որպես փորձի հոմանիշ: Դա բացատրվում է նրանով, որ ձևավորված վարքի նորմերն ու կանոնները ժամանակի ընթացքում հղկվում ու դառնում են ամենափորձվածն ու իմաստունը:

Ավանդույթների՝ կենսափորձի փոխանցման եղանակ լինելու կարողությունը պայմանավորված է հետևյալ *հանգամանքներով.*

1. ***Այլոց փորձը փոխառելու մարդկային կարողությունով***: Ավանդույթները կգոյատևեն այնքան, որքան մարդիկ ընդունակ են և, որ ամենակարևորն է, շահագրգռված են իրենց փորձը փոխանցելու հաջորդ սերունդներին: Կարելի է ասել, որ մարդկության կամ առանձին հանրույթների ջանքերով ավանդույթը սեփական կենսագործունեությունն ապահովելու կոլեկտիվ փորձ է: Ավանդականն այն է, ինչ ընկալվում և վերարտադրվում է բազմաթիվ անձանց կողմից:

2. ***Ավանդույթների տարածման աստիճանով:*** Ավանդույթներն իրենց բնույթով կարող են լինել տեղային, համազգային և անգամ միջազգային նշանակության: Օրինակ, տոները նշելու ավանդույթը բնորոշ է բոլոր ժողովուրդներին ու ազգերին, կրոնական դավանանքներին ու քաղաքակրթություններին: Տվյալ սոցիումում ավանդույթի տարածվածության աստիճանը նպաստում է կենսափորձի փոխանցման աստիճանի բարձրացմանը:

3. ***Ավանդույթների կայունության աստիճանով:*** Ավանդույթների կենսափորձի աղբյուր լինելու կարողականությունը պայմանավորված է դրանց կայունությամբ: Մարդկության պատմության ընթացքում տեղի է ունենում ավանդույթների «բնական ընտրություն», որի արդյունքում որոշ ավանդույթներ վերանում են, ստեղծվում են նորերը, իսկ որոշները հազարամյակներ շարունակ պահպանվում են: Ավանդույթների «բնական ընտրության» կայուն միջուկը համամարդկային արժեքների պահպանումն է:

4. ***Ավանդույթների հասարակական նշանակությամբ:*** Հաջորդ սերունդներին կենսափորձի հուսալի փոխանցման եղանակ կարող են լինել միայն այն ավանդույթները, որոնք ունեն համահասարակական կարևոր նշանակություն և հիմնված են սահմանային իրավիճակներում իրեն արդարացրած այն արժեքանորմատիվային վարքի վրա, որը միտված է սոցիոմշակութային նույնականության պահպանմանը:

5. ***Ավանդույթների ակտիվ կրողների առկայությամբ***: Ելնելով ավանդույթների նկատմամբ վերաբերմունքից մարդկանց կարելի է դասակարգել հետևյալ կերպ. ավանդույթների հավատարիմ հետևորդներ, ակտիվ կրողներ, պասիվ կրողներ և հակառակորդներ: Ակտիվ կրողների շարքում առանձնանում են ավանդույթների «խանդոտ պաշտպանները», որոնք ոչ միայն իրենք են հետևում ավանդույթի

պահանջներին, այլև նույնը պահանջում են նաև մյուսներից, որոնց վարքը որևէ կերպ չպետք է տարբերվի ավանդականից, հետևաբար՝ իրենց վարքից ու գնահատականներից:

6. Մարդու բազիսային պահանջմունքներին ավանդույթների մերձության աստիճանով: Մարդու բազիսային պահանջմունքներին առավելագույնս մերձեցած առօրեականության ավանդույթները ժամանակի ընթացքում շատ քիչ են փոխվում, մինչդեռ հասարակականպատմական ֆորմացիայի առանձնահատկությունն արտացոլող ավանդույթները անմիջապես իրականանում են տվյալ շրջափուլի ավարտից հետո: Ճիշտ է, ավանդույթները պայմանավորված են մարդկանց ապրելակերպով, սակայն հենց իրենք էլ ձևավորում են այդ ապրելակերպը: Յուրացնելով ինչ-ինչ ավանդույթներ, հաջորդ սերունդը ձևավորում է նաև իր ապրելակերպը՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ նախորդներին Հետևաբար, առանց ժառանգորդման չէր լինի նաև այն ամբողջականությունը, որը ընկած է «մարդկություն» և «մարդկային պատմություն» հասկացությունների հիմքում:

7. *Ավանդույթների փոխգործակցությամբ:* Ավանդույթները որոշակի ձևով կարող են միմյանց փոխադարձաբար լրացնել, հակասել կամ արտամղել, համադրվել, ձևափոխվել կամ հարմարվել: Միգրացիայի պայմաններում կարող է տեղի ունենալ տարբեր էթնիկական, ազգային և կրոնական խմբերի ավանդույթների «փոխանակություն»: [4 .31 էջ]

1.2. Կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության առանձնահատկությունները

Կրտսեր դպրրոցականի բարոյական արժեքների ձևավորող կարևորագույն պայմաներիից է ժողովրդական ավանդույթների ճշգրիտ ուսուցումը , այս ամենին նպաստում է տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանությունը լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը :
Այդ դասընթացում կարևորվում է ուսուցչի կողմից ընտրված ժողովրդական հեքիաթների , պոեմների , պատմվածքների մեջ առկա ավանդույթների ճիշտ մեկնաբանումը :
Ընտանիքում է երեխան յուրացնում վարքագծային նորմեր, այստեղ է, որ իրականացվում է երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին: Առաջին հերթին ընտանիքում են ձևավորվում և զարգանում անձի հետևյալ որակները՝ բարություն, հոգատարություն շրջապատի (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների) նկատմամբ, ճշմարտախոսություն, խոսքի ու գործի համապատասխանություն, ազնվություն, պատասխանատվություն (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտություն (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածություն և այլն: Ըստ **Ղ. Աղայանի**՝ բարոյական դաստիարակության ակունքն աշխատանքն է, որը նյութական և հոգեկան բոլոր հատկությունների աղբյուրն է: *«Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության»* : Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար: Աշխատանքային դաստիարակության ավանդույթների մասին Ղ. Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել են նրա «Մայրենի լեզվի» դպրոցական դասագրքերում, և այսօր էլ

հայ անվանի մանկավարժի հայացքները մասին մեծապես նպաստում են հայեցի կրթության ու բարոյական դաստիարակության գործին: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով:[1.177 էջ]

Օրինակ՝ Կախարդական լավաշի խորհուրդը գալիս է դարերի խորքից, մեր պապիկների ու տատիկների խրատներից ու մեզ սովորեցնում, որ երջանկությունը աշխատանքի մեջ է:

1988 թվականին <<Հեքիաթ Նաղաշ անունով տղայի և հացի մասին, որի անունն է լավաշ>> հեքիաթի հիման վրա նկարահանված <<Կախարդական լավաշ>> մուլտֆիլմը պատմում է Նաղաշ անունով մի բարի տղայի մասին, ով ապրում էր լավաշ թխող իր մայրիկի հետ: Բայց Հայոց աշխարհում տղաները շուտ են մեծանում, մոռանում մանկական խաղերի մասին ու դառնում օգնական ծնողների համար: Տղան մոր թխած լավաշներից մեկը վերցնում է և ճանապարհ ընկնում : Անհաջողությունների և փորձությունների միջով անցնելով հասկանում է , որ ամենից լավ տունը իր տունն է որ կա : Վերադառնելով գյուղ , մի լավաշաչափ հող է մաքրում քարերից , վարում է , ցանում , սեփական քրտինքով ջրում և առատ բերք ստանում :Այս հեքիաթի ճշգրիտ մեկնաբանությունը աշակերտների մեջ սեր է սերմանում դեպի աշխատասիրությունը :

Նմանատիպ հեքիաթների , ավանդազրույցների , պատմվածքների ճշգրիտ մեկնաբանությունը ձևավորում է բարոյական նորմեր կրտսեր դպրոցականի կյանքում :

Ժողովրդական ավանդույթների բաղկացուցիչ մաս է կազմում ազգային տարազը:

Կերպարվեստի և տեխնոլոգիաի դասաժամերին գունավորում են տարազներ , պատրաստում տիկնիկներ , նախշազարդում հագուստներ : Համեմատում այլ երկրների տարազներ գտնում նմանություններ ու տարբերություններ :

Ազգաին տարազի ուսումնասիրությունը նպաստում է կրտսեր դպրոցականի հայրենասիրական դաստիարակությունը :

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական աշխատանք և հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություն

21-րդ դար. հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Ինչպիսի՞ն է ժամանակակից կրտսեր դպրոցականը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում:

Ուսումնասիրության նպատակն է պարզել, ժողովրդական ավանդույթների ազդեցությունը կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության վրա: Նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել երեխաների ընտանիքում ավանդույթների պահպանման և դրանք հաճախակի կիրառման արդյունավետությունը
2. Պարզել, թե ընտանիքի անդամներն ինչպիսի պատկերացումներ ունեն բարոյական դաստիարակության վերաբերյալ.
3. Բացահայտել, մանկավավարժների համար կրտսեր դպրոցականի բարոյական արժեքների կարևորությունը

Հետազոտությանը մասնակցել են 30 ծնողներ և 12 ուսուցիչներ:

Հետազոտության նպատակին և առաջադրված խնդիրների լուծման համար օգտվել ենք հետևյալ մեթոդներից՝

- *Հարցման մեթոդ*
- *Թեստային մեթոդ*

Հարցեր ծնողներին .

1. Ընտանիքում պահպանում ե՞ք ժողովրդական ավանդույթները .



2.Ընտանիքում ունե՞ք ժառանգաբար փոխանցվող ավանդույթներ, որոնք անբաժանելի մասն են կազմում Ձեր երեխայի դաստիարակության մեջ .



3.Ազգային ավանդույթները նպաստում են Ձեր երեխայի բարոյական արժեքների ձևավորմանը;



4.Գիտատեխնիկական դարաշրջանում նախապատվությունը տալիս ե՞ք ազգային ավանդույթներին .



5.Ձեր երեխան պատրաստակամ է մասնակցել ազգային տոնակատարություններին :



6.Արդյունավետ համարում եք ավանդույթների և նորարությունների հարաբերակցումը



Հարցեր ուսուցիչներին

1. Ո՞ր առարկաներն են նպաստում ազգային ավանդույթների դաստիարակմանը և պահպանմանը

Գրաֆիկ 1



2.Ի՞նչ արտադասարանական աշխատանքներ եք կատարում ի նպաստ սովորողների բարոյական դաստիարակության .



Գրաֆիկ 2

3.Առաջնային եք համարում բարոյական դաստիարակության մեջ ազգային ավանդույթների պահպանումը թե նորարական մեթոդները



Գրաֆիկ3

4.Նորագույն տեխնոլոգիաները նպաստում են ազգային ավանդույթների մոռացմանը



Գրաֆիկ 4

Այսպիսով, կարելի է հետևություն անել, որ շատ կարևոր է դպրոց-ընտանիք փոխհամագործակցության դերը սովորողների բարոյական դաստիարակության գործում:

Վերը ասվածից կարելի է եզրակացնել, որ դպրոցներում իրականացվող բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է տարբեր մասնագետների շղթայական աշխատանքների փոխկապվածությունից: Այսպիսով, ընդհանրացնելով իրականացված հետազոտական ուսումնասիրության ստացված տվյալները, համադրելով զրույցի և թեստավորման արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության ձևավորման գործում մեծ դեր են խաղում դպրոցն ու ընտանիքը,
- աճող սերունդը հետաքրքրվում է իր ազգային ավանդույթները, ինչի մասին է վկայում սովորողների կայուն հետաքրքրությունները
- կրտսեր դպրոցականների մեծ մասի ծնողներն առաջնային էին համարում բարոյական դաստիարակության մեջ ավանդույթների պահպանումը
- ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում՝ երեխաներին ուսուցմանը մոտիվացնելու և ազգայինին ավելի մոտեցնելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակության առաջընթացի կարևորագույն պայմաններից մեկը սերունդների պատմական ժառանգորդության պահպանումն է: Կրտսեր դպրոցականի ազգային դաստիարակության գաղափարի, անձնավորության բարոյական կայացմանը, որպես հիմք հանդես են գալիս այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սերը մարդու նկատմամբ, բարությունը, արդարությունը, իրավահավասարությունը, պատասխանատվությունը, պատիվն ու արժանապատվությունը, պարտքի զգացումը, մշակութային նույնականացումը, , աշխատանքն, ազգային ինքնագիտակցությունն ու պատմական հիշողությունը, հարգանքը ազգի, հայրենի երկրի, մշակույթի, պատմության նկատմամբ, դավաճանության անընդունելիությունը և այլն:

Հիմք ընդունելով կրտսեր դպրոցականների ծնողների և ուսուցիչների հետ իրականացված հետազոտությունն, ունենք հետևյալ արդյունքները .

1. Անձի բարոյական զարգացման և ձևավորման համակարգում անփոխարինելի դեր ունեն ժողովրդական ավանդույթները:

2. Դպրոցում բարոյական դաստիարակության համակարգը ներառում է սովորողների ազգային ավանդույթների գիտակցության ձևավորմանն ուղղված միջոցառումներ:

3. Կարևերվում է սերունդների կենսափորձի փոխանցման համատեքստում ավանդույթների ժառանգորդումն և ինքնության պահպանումը:

Արդյունավետ եմ համարում

- ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում՝ երեխաներին ազգայինին մոտեցնելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աիդա Մրտեյան Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում << Մխիթար Գոշ >>, Գիտամեթոդական հանդես 2019թ, 177 էջ

2. Գրետա Հակոբյան Ժողովրդական մանկավարժությունը որպես անձի հոգևոր ներաշխարհի ձևավորման կարևոր աղբյուր<< Մանկավարժական միտք >>
2005 2-3 էջ 17:

3. Խ. Աբովյանի Երկերի լիակատար ժողովածու հ.7 Երևան 1956, 184 էջ

4. Նելլի Ալավերդյան Ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցակարկման եղանակ ուսումնական ձեռնարկ 2019թ, 31 էջ